ՏԵՂԵԿԱՆՔ

«Հարկային ծառայության մասին» օրենքում լրացվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 1. «Հարկային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին հոդվածով.

«Հոդված 9.1. Հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունը

1. Պետական եկամուտների կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում ~~**Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի**~~ **<u>հարկային մարմնի</u>** նախորդ տարվա գործունեության մասին: Հաղորդումը ներառում է նախորդ տարվա ընթացքում հարկային մարմնի իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկություններ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ~~**Հայաստանի Հանրապետության**~~ սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի ներկայացմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաղորդումը Ազգային ժողով ներկայացվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, տեղադրվում է հարկային մարմնի կայքէջում:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը: